ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 989-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2016.10.05/73(1253) Հոդ.937	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	29.09.2016
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	30.09.2016
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	05.10.2017	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂ ՍՆՆԴԻ ՇՂԹԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 սեպտեմբերի 2016 թվականի N 989-Ն

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂ ՍՆՆԴԻ ՇՂԹԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և 18-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորի գործունեության եզրակացություն տալու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կենդանական ծագման սննդամթերքի արտադրության ոլորտները և տեսակները՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետին՝ մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը բացահայտել կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի գործող օպերատորներին և վերջիններիս յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ տեղեկատվություն տրամադրել գործունեության եզրակացություն ստանալու ժամկետների և կարգի, ինչպես նաև եզրակացության հիման վրա գործունեություն իրականացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորի գործունեության եզրակացության հիման վրա Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունն իրականացնում է արտադրական օբյեկտների պետական գրանցում՝ Մաքսային միության (Եվրասիական տնտեսական միության) հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշմամբ հաստատված «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի համաձայն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Կ. Կարապետյան

2016 թ. սեպտեմբերի 30
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 29-ի N 989-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂ ՍՆՆԴԻ ՇՂԹԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորի գործունեության եզրակացություն (այսուհետ՝ եզրակացություն) տալու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի N 989-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված ոլորտներում և տեսակներով գործունեություն իրականացնող սննդի շղթայի օպերատորների վրա:

3. Սույն կարգի գործողությունը չի տարածվում անձնական կամ ընտանեկան օգտագործման համար նախատեսված սննդամթերքի տնային պայմաններում պատրաստման և վերամշակման վրա:

4. Եզրակացությունը տրվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորների դիմումի հիման վրա:

5. Եզրակացություն ստանալու համար կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորները (այսուհետ՝ հայտատու) առձեռն, փոստով կամ էլեկտրոնային եղանակով՝ լիազորված մարմնի պաշտոնական կայքի կամ էլեկտրոնային փոստի միջոցով լիազոր մարմին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմում՝ համաձայն N 1 ձևի.

2) կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորի գործունեության եզրակացություն տրամադրելու համար վճարման անդորրագիր:

6. Լիազոր մարմինը, հայտատուի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա, 20 օրվա ընթացքում (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության դեպքում), տալիս է եզրակացություն՝ համաձայն N 2 ձևի:

7. Եզրակացություն ստանալու մասին դիմումը լիազոր մարմնի կողմից վերադարձվում է, եթե սույն հավելվածի 5-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի են, և հայտատուն երեք օրվա ընթացքում չի վերացնում դրանցում առկա թերությունները:

8. Եզրակացությունն ստանալու համար դիմումն ստանալուց հետո լիազոր մարմինը պարտավոր է իրականացնել վարույթ՝ հայտատուի արտադրական գործունեության համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին որոշելու նպատակով:

9. Վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

10. Վարույթի արդյունքների հիման վրա լիազոր մարմինը տալիս է եզրակացություն կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների անհամապատասխանությունները վերացնելու մասին հանձնարարական՝ հղում կատարելով իրավական ակտով սահմանված պահանջներին և նշելով անհամապատասխանությունների վերացման համար անհրաժեշտ միջոցառումները: Անհամապատասխանությունները վերացնելու համար լիազոր մարմնի կողմից տրամադրվող ժամկետը համաձայնեցվում է տնտեսավարող սուբյեկտի հետ: Սույն կետով սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չվերացնելն իրավական հետևանքներ չի առաջացնում:

11. Հանձնարարականում նշված ժամկետում անհամապատասխանությունները վերացնելուց հետո հայտատուն 3 օրվա ընթացքում լիազոր մարմնին գրավոր ծանուցում է հանձնարարականի կատարման և հայտնաբերված անհամապատասխանությունները վերացնելու մասին: Ծանուցման մեջ նշվում են անհամապատասխանությունների վերացման փաստը և հայտնաբերված անհամապատասխանությունների վերացմանն ուղղված միջոցառումները:

12. Լիազոր մարմինը սույն կարգի 8-րդ կետով սահմանված վարույթի արդյունքում հայտնաբերված բոլոր անհամապատասխանությունները վերացնելու մասին ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում իրականացնում է վարույթ և բոլոր անհամապատասխանությունները վերացնելու դեպքում ընդունում եզրակացություն տալու մասին

որոշում:

13. Եզրակացությունը տրվում է անժամկետ:

14. Եզրակացություն տալը մերժվում է լիազոր մարմնի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին հայտատուի արտադրական գործունեության անհամապատասխանությունները կամ հայտնաբերված անհամապատասխանությունները վերացնելու մասին հանձնարարականը չկատարելու դեպքում:

15. Եզրակացություն ստանալու համար ներկայացված դիմումը մերժելու մասին որոշումը՝ մերժման հիմքերի նշմամբ, լիազոր մարմինը երեք օրվա ընթացքում պատշաճ ձևով ուղարկում է հայտատուին:

16. Հայտատուն եզրակացության տրամադրման մերժման որոշումը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

17. Հայտատուն դիմումում ներկայացված տվյալների փոփոխման, ինչպես նաև գործունեության դադարեցման կամ իրավաբանական անձի վերակազմակերպման կամ լուծարման դեպքում 15-օրյա ժամկետում լիազոր մարմին է ներկայացնում համապատասխան տեղեկություններ: Համապատասխան տեղեկություններ չներկայացնելը հանդիսանում է տրված եզրակացության դադարեցման հիմք:

18. Հայտատուին տրված եզրակացությունը փոխարինվում է հայտատուի անվանափոխության կամ կազմակերպաիրավական ձևի փոփոխման դեպքում, դիմելուց հետո 3 օրվա ընթացքում:

19. Արտադրության այլ ոլորտում կամ արտադրության նույն ոլորտում արտադրության այլ տեսակով գործունեություն սկսելուց առաջ հայտատուն եզրակացություն ստանալու համար լիազոր մարմին է դիմում նոր արտադրական գործընթացների կամ արտադրության այլ ոլորտում կամ արտադրության նույն ոլորտում արտադրության այլ տեսակով գործունեություն սկսելու ծրագրավորվող փաստացի մեկնարկից առաջ՝ սույն կարգին համապատասխան:

20. Լիազոր մարմինը սույն կարգի 19-րդ կետում նշված դիմումի հիման վրա եզրակացություն տալու կամ մերժելու մասին որոշումն ընդունում է սույն կարգի 7-15-րդ կետերով սահմանված կարգով:

21. Եզրակացությունը կորցնելու (ոչնչացվելու և այլն) դեպքում լիազոր մարմնի կողմից տրամադրվում է եզրակացության կրկնօրինակը, որի աջ անկյունում կատարվում է դրոշմակնքում՝ «Կրկնօրինակ» բառով:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան

Հավ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Դ Ի Մ Ո Ւ Մ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂ ՍՆՆԴԻ ՇՂԹԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմող՝ _____

(իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը,

_____

հեռախոսահամարը և էլեկտրոնային հասցեն)

_____

գործունեության ոլորտը (տեսակը)

Գտնվելու վայրը՝ _____

(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)

Իրավաբանական անձի պետական գրանցման համարը,
անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը

_____

Հարկ վճարողի հաշվառման համարը

_____

Ներդրված որակի կառավարման համակարգը

_____

Խնդրում եմ տալ եզրակացություն կենդանական ծագման սննդամթերքի արտադրության _____
(ոլորտը. տեսակը, ծավալը)

գործունեության վերաբերյալ:

Դիմումին կից ներկայացնում եմ _____:
Հայտնում եմ, որ ներկայացված փաստաթղթերում առկա տվյալներն ամբողջական են և հավաստի:

Հետադարձ ծանուցման եղանակը՝ _____
(հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Դիմող _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Հավ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԱՐՏԱԴՐՈՂ ՍՆՆԴԻ ՇՂԹԱՅԻ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ N ____

Հայտատու _____
(իրավաբանական անձի անվանումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը)
_____

Գտնվելու վայրը _____
(իրավաբանական անձի գտնվելու վայրը, անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը)

Գործունեության ոլորտը (տեսակը) ծավալը _____
_____
Պետական գրանցման/հաշվառման համարը _____
Հարկ վճարողի հաշվառման համարը _____

Ծառայության պետ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

____ _____ 20 թ.

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
սեպտեմբերի 29-ի N 989-Ն որոշման

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

NN p/կ	Կենդանական ծագման սննդամթերքի արտադրության ոլորտը	Կենդանական ծագման սննդամթերքի արտադրության տեսակները
1.	Մսի արտադրություն	Խոշոր և մանր եղջերավոր կենդանիների, խոզի, ձիու, թռչնի, ջայլամի, ճագարի և ջրաքիսի բուծում և աճեցում, Սպանդանոցային գործունեություն
2.	Մսամթերքի արտադրություն	Մսից, սպանդից ստացված այլ մթերքից պատրաստված հում, ապխտած, կիսաապխտած, եփած երշիկեղենի և համանման մթերքի, ճարպի, կիսապատրաստվածքների, պահածոների, բաստուրմայի, սուջուխի արտադրություն
3.	Ձկան արտադրություն	Ձկնաբուծություն և խեցգետնաբուծություն, պահածոյացում, ձկան ապխտում
4.	Ձկնկիթի արտադրություն	Ձկնատեսակների ձկնկիթի արտադրություն և վերամշակում
5.	Կաթի արտադրություն	Խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում և աճեցում Հում կաթի մթերում
6.	Կաթի վերամշակում և կաթնամթերքի արտադրություն	Պաստերացված կաթի, չոր կաթի, կաթնային ըմպելիքի, սերուցքի, թթվասերի և թթվասերային մթերքի, կաթնաթթվային մթերքի, կաթնաշոռի և կաթնաշոռային մթերքի, պանրի և պանրային մթերքի, կարագի, պաղպաղակի, սփրեդի, յուղի, պահածոների արտադրություն
7.	Ձվի արտադրություն	Թռչնի ձվի, ձվի փոշու և մելանժի արտադրություն

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Դ. Հարությունյան